

ՀԱՆԳՈՒՅՆԱԼ ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 2-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ Ս.Ղ.Զ.Կ.-Ի ԽՕՍՔԸ

Ստորել կը ներկայացնենք ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ մահուան 2-րդ տարելիցին առթիւ Ընկ.հի Անի Եփրեմեանի արտասանած Ս.Ղ.Զ.Կ.-ի խօսքը:

«Մի՛ կանգնիր իմ գերեզմանին մօտ եւ մի՛ արտասուիր Ես այնտեղ չեմ, Ես չեմ ննջած: Ես փչող հազարաւոր քամիներն եմ: Ես ծիւղի վրայ աղամանդէ փայլերն եմ: Ես հասունցած ցորենի վրայ արեւն եմ: Ես աշնանային նուրբ անձրեւն եմ: Ես գիշերային աստղերու փափուկ փայլն եմ: Մի՛ կանգնիր իմ գերեզմանին մօտ եւ մի՛ արտասուիր Ես այնտեղ չեմ, Ես չեմ մահացած»:

Մերի Էլիզաբէթ Ֆրայի բանաստեղծութեան այս խօսքերը որքան պիտի ուզէիք լսել մեր սիրելիներէն, որոնք թեպէտ մեզի հրաժեշտ տուին, բայց անոնց մասին մեր ամենախիտ մտքերը ամենօրեայ դրութեամբ ներկայ են, եւ մենք կը փորձենք միտքարուիլ զգալով փչող քամիները, տեսնելով ծիւղին աղամանդէայ փայլը, արեւը, անձրեւն ու աստղերը: Եւ պահ մը կը փորձենք զգալ մեր արցունքները, չարտասուել... եւ զգալ, որ մեր սիրելիները մահացած չեն:

Սիրելի սգաւոր բարեկամներ, Շատ սիրելի Գալայճեան ընտանիք, Երկու տարի առաջ համաճարակային անողոք հիւանդութիւնը մեզմէ անժամանակ խլել է լիբանանահայ գաղութի հաւատարմորդ հայորդիներէն մէկը, ազգին ու ժողովուրդին ծառայատէր գաւազն, յաջողակ ֆինանսագետ, պարկեշտութեան ու ազնուութեան տիպար, սիրալիր ամուսին եւ հոգատար հայր, ազգասիրութեամբ ու հայրենասիրութեամբ թրծուած՝ Պէպօ եւ Ազատուհի Սիմոնեան Գալայճեան ազնուական ընտանիքին արժանաւոր որդին՝ Տիգրանը, որ իր գնահատելի արժանիքներուն, ուսանելի վաստակին եւ մատուցած ծառայութիւններուն համար արժանատրապէս յարգելի անձնաւորութիւն մըն է:

Տիգրան Գալայճեանի շնանստը, ծառայատէր ու ընկերասէր բնաւորութեան, մէկ խօսքով՝ լաւ մարդ ըլլալուն պէրճախօս վկաններն են ոչ միայն իր ընտանիքին անդամները, գաղափարակից ընկերներն ու ասպարեզի իր գործընկերները, այլ բոլոր անոնք, որոնք օր մը ծանօթացած են Տիգրանին կամ անցած են անոր ճանապարհէն: Խօսուն ապացոյց է նաեւ իր գործը: Շրջապատին միշտ աջակցող, իրեն դիմողին՝ կարեկցող, համայնքին բարգաւաճման ու բարելաւման համար իր նիւթական ու բարոյական օժանդակութիւնը անվերապահօրէն տրամադրող, Յնչակեան կուսակցութեան գաղափարաբանութեան եւ անոր հովանիին տակ գործող միութիւններուն առաքելութեան հաւատացող եւ անոնց գործունէութեան սատար հանդիսացող, լիբանանահայ գաղութին մէջ գործուն ներկայութիւն եղող Տիգրան Գալայճեան պատկառելի անձնաւորութեան բացակայութիւնը յուշող ինչքան պահեցող, ինչպէս նաեւ մեծ հարուած եւ բոլորիս, որովհետեւ Տիգրանը ճանչցած ու վայելած ենք որպէս տիպար ու օրինակելի անհատ մը:

Թէեւ մահուան տխուր կոչնակը վաղաժամ հնչեց Տիգրանի պարագային, բայց բոլորս մեծ սիրով կը յիշենք Տիգրանը ու մշտական ներկայութիւն դարձուցած ենք զայն մեր յուշերուն մէջ, հաւատալով որ Տիգրանին արժանիքները եւ օրինակելի վարքը յիշատակելով զանոնք կը սերմանենք այլոց մէջ, որովհետեւ Տիգրանին յիշատակը վառ պահելով, զայն արժեւորելով եւ իր օրինակին հետեւելով է որ կը յաւերժացնենք ու կ'ամմահացնենք զինք:

Մի՛ կարծեք, թէ ան մեկնած է, պարզապէս մտածեցէք որ ան ջերմ ու յարմարաւետ վայրի մը մէջ է, հեռու՝ վիշտերէն ու տառապանքներէն: Նաեւ մտածեցէք եւ հաւատացէք, որ ան ողջ է բոլոր ա՛յն սրտերուն մէջ, որոնց ան հպած է, որովհետեւ սիրուած անձը երբեք չի մոռցուիր: Մտածեցէք եւ հաւատացէք, որ ան ողջ է բոլոր ա՛յն հոգիներուն մէջ, որոնց մէջ ան հետք թողած է եւ այդ հետքը իսկապէս անկորնչելի է:

Սիրելի Տիգրան, Մեր սրտի խորքէն հնչած այս խօսքերը թող փունջ մը ծաղիկ ու ծխացող խունկ ըլլան քու լոյս եւ անթառամ յիշատակիդ:

ՆՈՒՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ
Ողբ. ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ մահուան 2-րդ տարելիցին առթիւ, «Արարատ» օրաթերթին կը կատարուին հետեւեալ նուիրատուութիւնները՝
Տէր եւ Տիկ. Ռազմիկ եւ Դերա Գալայճեան 300 ամ. տոլար
Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Զեյա Ալպարեան 100 ամ. տոլար
Տէր եւ Տիկ. Դրայր Պուլաքճեան 1.000.000 Լ.Ո.

ՆՈՒՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ
Ողբ. ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ մահուան 2-րդ տարելիցին առթիւ, Տէր եւ Տիկ. ընկ. Վանիկ եւ Կրեյն Տազեան 500.000Լ.Ո. կը նուիրեն «Արարատ» օրաթերթին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏՃԱՄԸ

(Շարունակուած Ա. Էջէն)

Կանով համախմբել ազգային ողջ ներուժը, ամրագրել միմեանց հանդէպ յարգանքն ու սերը, վստահութեան հաստատուն հիմքերի վրայ խարսխել Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը: Պատմական փորձառութեամբ գիտենք, որ ներդրութիւններից յաղթանակած ենք դուրս եկել, երբ եղել ենք միաբանուած ընդհանրական նպատակների շուրջ: Քրիստոսով նորոգուած, Քրիստոսով միասնական, Աստծոյ շաւիղներով քայլելով, մենք, ինչպէս առաքելայն է ասում, մեզ պաշարած փորձութիւններից այսօր էլ յաղթական պիտի դուրս գանք (հմմտ. Դճ. 8.37):

Սիրելի գաւազներ Մեր, Աստծոյ օգնականութիւնը խնդրելով՝ ամուր մնանք առ Փրկիչ մեր Տէրը հաւատքի մէջ եւ աներկմիտ սրտով պահպանենք մեզանում Սուրբ Ծննդեան յուսաբեր տօնի հոգեւոր ապրումը: Չօրանանք հայրենիքի սիրով եւ ամեն կարելի հնարաւորութեամբ սատարենք Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում դժուարութիւններ կրող մեր քոյրերին ու եղբայրներին: Գիտակցենք, որ պատասխանատու ենք հայրենիքի ու սերունդների առջեւ եւ վտանգի չենթարկենք մեր անկախ պետականութիւնը: Մեր բարի գործերը դարձնենք հիմքեր մեր վերելքի ու յաղթութեան եւ միասնաբար կերտենք մեր հայրենիքի ու ժողովրդի ապահով, լուսաւոր գալիքը:

Սուրբ Ծննդեան Պատարագի այս սրբազան պահին Հայրապետական Մեր խօսքն ենք յղում խրոխտ ու անվեհեր Արցախի հաւատարմորդ Մեր գաւազներին: Սիրելի արցախցիներ, մեր ժողովրդի մտածումներն ու հայեացքները այս օրերին առաւելաբար ձեռք են ուղղուած: Դուք, որ ղեկարարութիւնների առջեւ երբեք չէք ընկրկել ու չէք նահանջել, այսօր էլ տոկոսութեամբ շարունակում էք հերոսաբար պայքարել յանուն ձեր ազատ ու անկախ կեանքի, յանուն պատմական արդարութեան վերականգնման: Ձեր քաջ նախնեաց փառաւոր օրինակով հաստատուն ու անկուս մնացէք հայրենի հողում ապրելու եւ արարելու վճռականութեան մէջ: Մեր Սուրբ Եկեղեցին աշխարհասփիւռ իր թէմերով ձեզ հետ է, աջակց ու զօրակից ձեզ: Ձեր հիմնարար իրաւունքների պաշտպանութեան արդար պահանջը յաղթանակելու է համայն հայութեան ջանքերով ու միջազգային հանրութեան սատարումով: Հաւատում ենք, որ Աստծոյ ողորմածութեամբ մեր ժողովուրդը իրեն պատած խաւարի մէջ պիտի լոյս ծագեցնի եւ դիմագրաւի իր կեանքում ծառայած լրջագոյն մարտահրաւերներին:

Այս զգացումներով ու մտածումներով, Սուրբ Ծննդեան աւետիսով Մեր ողջոյնն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Սուրիան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանին՝ մաղթելով Աստծոյ զօրակցութիւնը տէրունաւանդ ծառայութեան մէջ: Ի Քրիստոս եղբայրական սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով մանկացեալ Փրկչի օրհնութիւնը իրենց աստուածապատուէր առաքելութեանը եւ հաւատարմորդ հօտին: Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հաւատարմորդ Մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփիւռս:

Սուրբ Ծննդեան այս շնորհազարդ առաւուտ սրտագին աղօթքով խնդրում ենք Ամենակալ Տիգրան, որ բերեցեմեան աստղալոյսը յարատեւ շողորմակի մեր ազգային կեանքի երկնակամարում, որպէսզի մենք, Փրկչին ապաւինած, հաստատենք մեր ընթացքը սիրոյ, համերաշխութեան ու միասնականութեան շաւիղներում: Թող Սուրբ Ծննդեան կենարար խորհրդով խաղաղութիւն լինի աշխարհին ու համայն մարդկութեանը: Թող հաւատքով պայծառացած՝ աշխարհասփիւռ ազգս հայոց զօրացնի իր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, իրականութիւն դարձնի իր նուիրական իրաւունքը եւ փառաւորի մարդեղացեալ Փրկչին՝ գոհութեամբ ձայնելով:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

«ԲՈՒՆՈՐԱ ՄԵՎ ՆԱԽՈՒ ՄԵՋ ԵՆՔ»

(Շարունակուած Ա. Էջէն)

Պայրոցները պիտի շարունակեն գործել բնականոն հունով: Իշխանութիւնները նաեւ զգուշացուցին, թէ առարկաները անարդար սակագիներով վաճառողները պիտի զրկուին մատակարարումէն:

ՊԱՏԺԵԼ ԲՈՒԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Արցախի մէջ այսօր կը նախատեսուի բողոքի հաւաք կազմակերպել Կարմիր խաչի միջազգային կազմակերպութեան գրասենեակներուն առջեւ՝ պահանջելով ապահովել արցախցիներուն արժանապատիւ կեանքի իրաւունքը եւ կանխել մարդասիրական հաւանական աղէտը: Արցախի մարդկային իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան համացանցային նոր գրառումով մը միջազգային ընտանիքին կոչ ուղղեց պատժել Պաշտել բռնապետութիւնն ու նախագահ Իլիւհամ Ալիւեի յանցագործ վարչակարգը:

ԱՐՑԱՅԻՆՆԵՐԸ ԴԵՊԻ ԴՊՐՈՑ

Արցախի պաշարումին հետեւանքով Հայաստանի մէջ մնացած արցախցի երեխաները այսօր կը սկսին դպրոց յաճախել իրենց ժամանակաւոր բնակութեան վայրերուն մէջ: Երեխաներուն հետ Հայաստան գտնուող Արցախի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարը նշեց, որ «թշնամիին ուզածը՝ երեխաները իրենց միջավայրն են կրթութեան իրաւունքն անջատելն է, բայց մենք չենք կրնար այդ թոյլատրել: Երեխաները դպրոց պիտի յաճախեն մինչեւ միջանցքի վերաբացումը», ըսաւ նախարարը: Ան հաւատարմացուց, թէ իրենք դիմած են երեխաներու իրաւունքներու պաշտպան-

ԸՆՏՐԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ ԶՓԱԿԵԼ ՄԻՆՉԵՒ ...

(Շարունակուած Ա. Էջէն)

Երրօրեայ ղառական պատուիրակութիւնը Պէյրութի մէջ պիտի քննարկէ Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Լուսաւապուրկի մէջ բացուած ղառական գործեր, աւելցնելով, որ երրօրեայ պատուիրակութեան Լիբանան այցելութիւնը պիտի կրկնուի ապագային: «Երրօրեայներուն այցելու-



թիւնը չի խախտեր լիբանանեան օրէնքները, որովհետեւ մենք կը համագործակցինք ՄԱԿ-ին հետ կնքուած ուխտի հիման վրայ: Դատական պատուիրակութեան առաքելութիւնն է հարցաքննել մարդիկ, որոնք նախապէս լիբանանեան արդարադատութեան կողմէ հարցաքննուած են որպէս վկաններ, բացի մէկ անձէ, որ կը հարցաքննուի որպէս կասկածելի», ըսաւ Օուայատաթ: Նշենք, որ երրօրեայ պատուիրակութեան այցելութիւնը կը վերաբերի Ելեւմտական, դրամատնային թղթածրարներու:

Հանրապետութեան նախկին նախագահ Միշէլ Աուն նշեց, որ լիբանանեան արդարադատութեան ձախողութիւնը դուռ բացած է օտարերկրեայ դատական միջամտութիւններու, մաղթելով, որ «դատաւորներու ազնիւ մնացորդացը կարողութիւն ունենայ վերականգնելու վստահութիւնը լիբանանեան դատական կառոյցներուն նկատմամբ»:

Այլ գիծի վրայ, Պէյրութի նաւահանգիստի պայթումին հարցին հետեւող Պէյրութի իրաւաբաններու սենտիքայի յատուկ գրասենեակը յայտարարեց, թէ Բրիտանիոյ գերագոյն ատեսանիկ մօտ կը շարունակուի նաւահանգիստի պայթումին հետ առնչուող «Savaro Ltd.» ընկերութեան վերաբերող դատավարութիւնը: Նշենք, որ այս ընկերութեան անունը կ'առնչուի այն նաւուն հետ, որ տարիներ առաջ ենթադրաբար Պէյրութի նաւահանգիստ փոխադրած է այն պայթուցիկ նիւթերը, որոնք նաւահանգիստն ու մօտակայ թաղամասերը աւերեցին 2020-ի Օգոստոս 4-ին:

ՀՐԱԶԳՈՒԹԻՒՆ ՊԱՍՏՊԱՆՍՏ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը համացանցի ընկերային հաղորդակցութեան իր էջերուն վրայ



յայտարարեց, թէ հրաձգութեան փոխանակում տեղի ունեցած է Պալապաքի մօտակայ Տար Ուսիհա գիւղին մէջ, ուր հետախուզական ծառայութիւններու ջոկատ մը կը հետապնդէր թմրանիւթերու վաճառականութեան եւ ինքնաշարժներու գողութեան յանցանքով ամբաստանուած կասկածելի անձեր: Ըստ բանակի յայտարարութեամբ, ընդհարումին հետեւանքով չկայ վիրաւոր:

Նախապէս լիբանանեան բանակը խուզարկումներ կատարած էր նաեւ Պալապաքի Շարաունէ թաղամասին մէջ, ուր հրաձգութեան փոխանակումի ընթացքին վիրաւորուեցաւ հետապնդուած անձ մը:

Նուրբեան միջազգային գանազան կառոյցներու, սակայն բոլորն ալ անտարբեր կը մնան: Նշենք, որ միջանցքի փա-



կումին պատճառով Հայաստան կը մնայ 270 արցախցի երեխայ, որոնցմէ 20-ը Երեւան են, իսկ մնացեալը՝ Գորիս:

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com
ارارات جريدة سياسية يومية أرمنية | المديرية المسؤولة: اني صرافيان
تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر (ش.م.م.)